

ՏԱՍՏԵՐՈՒԹՅԱՆ

ՄԱՍԿ

Տարեկան արժեքը 10 րուբլ, կես տարեկանը 6 րուբլ:

Առանձին համարները 5 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմյուրյն համարողական մեջ:

Վարչարարությանը հիմնում են ուղղակի
Тифлис. Редакция «Маск»

Խմբագրատունը բաց է առևտուրեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տոն օրերից):

Հայտարարումներն ընդունվում է ամեն լիզովով:

Հայտարարությունների համար վճարում են
իրարանցիւր րոտին 2 կոպեկ:

ԲՈՎԱՆԳԱՎՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ: Մի կարևոր առաջարկություն: Որքանի մի նոր հիշատակություն: Նամակ Շուշու: Ներքին լուրեր: ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ: Թիֆլիս: Ֆրանսիա: Խաղաղ: ՀԵՌԱԳԻՐՆԵՐ: — ՅԱՅԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ: — ԲԱՆԱՍԻՐԱՎԱՆ: Թիֆլիսի Հայաստան:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

ՄԻ ԿԱՐԵՐՈՐ ՍՈՒՋԱՐԿՈՒԹՅՈՒՆ

Ցաւալի իրողութիւն է, ի հարկէ, որ Կ. Պոլսի ազգային ժողովը մերժել է Կիւրորիէի առաջարկութիւնը Փարիզում մի ֆրանսիական օրգան հիմնելու մասին մեր ազգային շահերին ծառայելու նպատակով: Ի նկատի ունենալով այն մեծ դերը, որ խաղում է եւ րօպական մամուլը քաղաքական ասպարիզում, շատ պարզ է, թէ որ աստիճան մեծ նշանակութիւն կունենար մի այդպիսի թերթի հայոց հարցի համար ներկայ ժամանակամիջոցում, առաւել ևս հրատարակված մի այդպիսի հմուտ և գիտական մարդու խմբագրութեամբ, ինչպէս, անկասկած, յիշեալ ֆրանսիացի հրատարակատեսէ: Հայոց հարցը իր լուծման շրջանի մէջն է և իսկ այդ պատճառով, կարծում եմ, որ թէ բոլոր ուսաց հայերը և թէ Կ. Պոլսի հայոց ազգաբնակչութիւնը, — որը արդէն չէ կարող չը հասկացած լինել իր տխուր սխալմունքը, — մեծ համակրութեամբ կըն-

դունեն «Մշակի» առաջարկութիւնը՝ նուրից խնդրել Կիւրորիէին հիմնել իր մասնաժամ թերթը: Այդ կարելի բան է, բայց դրա համար ժամանակ է հարկաւոր, որ այդպիսի մի նոր լրագիր կարողանար իր տարածութեամբ ցանկալի ազդեցութիւն ունենալ հայոց հարցի վրա, իսկ այս վերջինը սպասելու ժամանակ չունէ և հանդիսացած է եւրօպայի դիպլոմատիական հօրիզոնում, իբրեւ օրուայ հարց: Իշխան Բիսմարկի կարծիքով, այդ հարցի վճռելը տարածում է, իսկ Կիւրորիէին, ինչպէս յայտնի է անգլիական պարլամենտում նրա արտասանած խօսքերից, համարում է հայոց հարցը ամենազգաւորը այն հարցերի շարքում, որոնցով հարկաւոր է զբաղվել Փոքր-Ասիայում: Ցայանի է նոյնպէս, որ Կ. Պոլսի ուսաց դեսպանը, պ. Նովիկով առաջարկել է Բ. Կրան մի նոր ծրագիր Հայաստանի բնօրինակ: Ձը դիտելով վերջինի միտքը, բայց բոլորովին ճիշտ է այն, որ հայոց հարցի վերաբերութեամբ եւրօպայի դիպլոմատիական շրջաններում կազմված են երկու իրար ընդդէմ կուսակցութիւններ. մէկը Կիւրորիէինը — յօգուտ այդ հարցի, իսկ միւսը Բիսմարկինը — ի վնաս: Այլ տեղու թիւնների հայացքները գէպի այդ հարցը մեզ յայտնի չեն: Իսկ ունենք շատ այնպիսի փաստեր անցեալ ժամանակներից, որ կարող ենք ապահով համարել գոնէ Ֆրանսիայի և Իտալիայի համակրութիւնները գէպի հայոց ազգի բարեկեանութեան վի-

ճակը: Կար ժամանակ, որ այդ պետութիւնները ևս եղած էին զոհեր զարհուրելի բարբարոսութիւնների, իսկ հիմա ազատված հասարակական ճնշումներից, վայելում են օրինաւոր հանրագեղական և սահմանադրական կեանք: Ուրեմն դժուար չէ նախագուշակել որ հայոց հարցի բարեկեանները եւրօպայում անհամեմատ աւելի շատ են, քան թէ թշնամիները. բայց հարկաւոր է նկատել, որ զլխաւոր թշնամին — իշխան Բիսմարկը շատ վտանգաւոր է, իսկ այդ պատճառով հայոց հարցին նպաստող ֆակտորները, իւրանց գումարման մէջ, աւելի զօրեղ պիտի հանդիսանան, որ կարողանան յաղթել այդպիսի մեծ և զօրեղ թշնամուն, ինչպէս Բիսմարկն է, իսկ ամենազօրեղ ոյժը եւրօպայի պետութիւններում հասարակական կարծիքն է: Այդ կարծիքը կարող է լարվել գէպի հայոց հարցը լրագրական ներգործութեամբ, Անգլիայի և Ֆրանսիայի թերթերի միջոցով: «Times» լրագիրը, յայտնի է, թէ ինչ մեծ հեղինակութիւն ունի համարեալ ամբողջ Եւրոպայում աշխարհում: Այդ լրագիր ծառայութիւնը հայոց հարցին ներկայ միջոցում կարող է անգին հետեանքներ ունենալ, նոյնը կարող է կատարել և ֆրանսիական լրագրական մէկը: Այդպիսի լրագրական օրգանների ազդեցութեան տակ հասարակական կարծիքը ամբողջ եւրօպայում յօգուտ հայոց հարցի կարող է լարվել մինչև այն աստիճան, որ

հայոց խնդիրը կամփոփէ իր մէջ արեւելեան խնդրի բուն էութիւնը:

Ահա այդ նպատակով, իբրեւ հայերից մէկը, բարոյական պարտք եմ համարում հրաւիրել հասարակութեան ուշադրութիւնը գէպի հետեան առաջարկութիւնը. արդեօք կարելի չէ՞ր լինի հիմնել առանձին հայոց բաժիններ յիշեալ լրագրների մէջ հայոց խնդիրը պարզելու, նորա լուծման նպատակու և նրան այն նշանակութիւնը տալու համար, որին նա արժանի է, բայց որից դեռ ևս զօրեղ է, համարվելով երկրորդական հարցերի շարքում: Այդ միջոցով կարող ենք ունենալ շատ բարայներ և Կիւրորիէներ, որոնք թէ պարլամենտներում, թէ այլ հասարակական ասպարիզներում կը տան հայոց հարցին նորան արժանաւոր նշանակութիւնը, և Թիֆլիսի գազանաբարոյ ինստիտուտները կը մնան առանց հասնելու իրանց բարբարոսական նպատակներին: Շատ կարելի է, որ պատճառներ լինեն այս առաջարկութիւնը հերքելու. այդ գէպքում ցանկալի կը լինէր իմանալ այդ պատճառները, իսկ եթէ արգելող հանգամանքներ չը կան, չենք կարող ամբողջ սրտից չը ցանկալ որ շուտով հիմնվին հայոց բոժինները յիշեալ լրագրների մէջ: Թէ ինչ միջոցներով հարկաւոր է համենի այդ կարեւոր և օգտակար նպատակին — այդ լծող օրոշի մեր մամուլը:

Միքայէլ Սաղաթեան

ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅԱՍՏԱՆ

Ա. ՄԱՍԻ ԾԱՐՈՒՆԱՎՈՒԹՅՈՒՆ

10.

Հայոց Զոր և Ոստան

Հայոց Զոր, Ոստան կամ Կեալաշ, առաջինը 4 ժամ, երկրորդը 6 ժամ հեռաւորութիւն ունի Վանից: Հիւսիսային կողմից սահմանակից է Վանին, արեւմուտքից եղբարձ է Ժովով. հարաւային կողմից պարսպի պէս բարձրանում են Արտոս լեռները: Հայոց Զորը մի հովիտ է, որի միջից անցնում է Խոջաբայ կամ Անգղայ գետը և Դամիլի մայ առուն: Ոստան կամ Կեալաշ, հին Ռըշտունիք, մասամբ դաշտային դիրք ունի, զարդարված պտղատու և անպտուղ ծառերով. օդը բարեկեան է, դաւառազրուին է Նորգեղիկսան: Անգղային հին յիշատակներով լի է այս գաւառը: Գիւղերը դեռ կրում են իրանց հին անունները, ինչպէս Հայք, Հայկաշէն: Սա է Հայկաշ ձակաւաւանքի ձորը: Այստեղ են Աբրահամ խոստովանողի գերեզմանն ու վանքը, վարդապետի գիւղն ու գերեզմանը. Ոստանայ մէջն է Նորշէի անշուք գերեզմանը. Գաղիկայ և Գուրգենայ բերդի աւերակները Ոստանայ ծովափին են, որ քաղաքն էր: Վրա խոշոր տառերով դեռ կը կարդացվին նրանց անունները: Դեռ ևս չէն մնում է Նարեկայ վանքը Նարեկ գիւղի մօտ, Արտոս լեռան տարրոտում: Նարեկայ գէմուղէմ Աղթամար կըղզում է հայոց երրորդ կաթողիկոսը: Վանքի շինվածքը մի հրաշալի ճարտարապետութիւն է, որ շատերը Տրդատ ճարտարապետի գործն են համարում:

Կիւղերի թիւ..... 96

Հայոց թիւ	18,830
Քրդեր	3,370
Վարժարաններ	11
Աշակերտներ	566
Վանքեր	14
Եկեղեցիներ	32
Վանքերից հեռու գտնված գիւղերի բնակչիները լաւ հայեր են: Կիւղ գիւղի մէջ Կ. Պոլսի երկրագործական լընկ. մի՞ ուսումնարան է բացած:	

11.

Խիզան, Կեցան, Կեաւդեաւ և Կարճկան
Այս չորս միացեալ լեռնամիջնայ գաւառների գաւառապետներն է Նիքինիս և նրա կից Օղմանց գիւղերը: Կարճկանց ծովափնայ է, դիրքը լեռնային, անառիկ և առաջին աստիճանի ամուր: Պատուպարված է բարձր և կարծր ժայռերով, խոր և պտուտակաւոր ձորերով և կիրճերով: աւելացնենք այս լաբիւրինթոսի վրա և խիտ անտառները, որոնք վարդապետի պէս ծածկում են նրա բնական մարտկոցները, կը դառնայ մի ասհարկու և անուսանելի դիրք պաշտպանողների համար: Սրա ամրութիւնները գերազանցում են Ջուլամերիկին:
Անտառները վայրի կենդանիներով լի է, մանաւանդ վայրենի խոզեր, որոնց բազմաթիւ երամակները վխտում են ամեն կողմ: Բնակչիները, ոչ հայեր և ոչ քրդեր, չեն ուսում խոզի միս, դրա համար և բազմապատկվել է դրանց թիւ: Մի ապխտագործ կարող է հարիւր հազարների դիզել համարեա այդ պատրաստի դրամազլիքի:
Կարճկանից է մատակարարվում վանայ թէ շինութեան և թէ վտուելու փայտն ու անուրի: Նրա ծովափնայք սքանչելի են տեսարաններով: Դժուար թէ աշխարհի որ և է մասը կարողանայ մրցել նրանց վայրենի և աննկատ գեղեցկութեան հետ: Բնակիչները ամբողջապէս առուղջ

են: Վարդանի հողերը թէ և քիչ, բայց շատ արդիւնաբեր են: Սրա լեռների շղթան Տրդատի շարունակութիւնն է, որոնք հանքերով հարուստ են: Կանգում է արծաթ, կապար, պղնձ, երկաթ, և դեռ ուրիշ ինչ հանքեր, որոնք չեն երկրի անձանութիւն և քննված չէ: Ընձակ գիւղի և ս. Գաղիկը վանքի մէջ եղած ասարածութեան վրա երկաթի հանքի հին բովանդակի կայ: Կապարայ հանքերից ծածուկ օգուտ են քաղում վանայ մի քանի դարբինները: Կեցանը ջրաղացաբարի անուանի հանք ունի, որի քարերը մինչև քսան տարի կը դիմանան: Այս գաւառները անուպառ հարստութիւն են պարունակում իրանց ծոցում, մանաւանդ Կարճկան, որ իր անհուգական տեսարաններով, առատ բուսականութեամբ Հայաստանի Հէլլենիստէն է: Այդ անհարկու և ինքնապաշտպան տարերին պակասում է մի վիշէկ-թէլ նոր և անկախ Հելլենիստէն հիւնելու համար: Կարճկան շատ նաւահանգիստներ ունի, գլխաւորներն են՝ Սյուր և Խնձորիս գիւղերը: Իսկ Գաղիկանը ամենամեծ նաւահանգիստն է Բաղիշայ և Մշոյ առևտրական յարաբերութեանց վանայ հետ:

Կիւղերի թիւ	113
Հայոց թիւ	22,713
Քրդեր	4,668
Վանքեր	11
Եկեղեցիներ	70
Ուսումնարաններ	3
Աշակերտներ	246

12.

Ա ի լ ա թ

Ախլաթ հեռի է վանէն ցամաքային ճանա-

պարհով 30 ժամ, ծովով 7 1/2: Բաղիշայ, Մշոյ, Բուլանիսայ, Չիւսուրայ և Արճիկէի մէջն է. գաւառապետն է Կիւղի գիւղը: Մի մասը լեռնային է, իսկ ծովափնայք հարթ են: Օդը բառեկառն է, երկիրը ջրալի, հողը արդիւնաւոր: Ունի նաւահանգիստ: Քաղաքը հին ժամանակում ծագկած էր: Արաբացոյ տիրապետութեան օրերից գեղեցիկ շինվածքների տեսակներ են մնացել, քարափոր տներ, գմբէթներ, եկեղեցիներ, սև կարմիր քարերից շինած: Այս տեսակ քարերի չիտեր տարածվում են մինչև Բաղիշ, Մշոյ դաշտ, Բուլանիստէն և Մանաղիկերո, որոնք շինվածքի համար դիւրատաշ և յարմար են: Յիշեալ գաւառների վանքերը, եկեղեցիք բոլորն այդ քարերիցն են շինված: Այգեստանը պտղատու և լաւ մշակված են, մանաւանդ Խաղապաշտարին: Ախլաթի, Մշոյ, Չիւսուրայ և Բաղիշայ մէջ մի ընդարձակ սարադաշտ կայ, որին տեղացիք Ռահվայ են անուանում: Այնտեղ հոկտեմբերից մինչև մայիսի վերջերը աննշալ մնում է ձիւնը: Կրա մրրկալից ճանապարհը շատ վտանգաւոր է անցու դարձ անոդների համար: Չմեռները այդ անցքից դահուկով են անցնում լծված մարդկեքներով: Ռահվայի հիւսիսային կողմ բարձրանում է մի սուլուլիկ սար ծածկված մացառներով, դա անուանվում է Գրգուռ, կից սրան ցցված է Ներբով լեռը, որ իր փոքրիկ շղթան ձգում է մինչև Մշոյ դաշտը: Ներբով լեռը Գրգուռից բարձր է և իր գլուխը ցոյց է տալիս բոլոր ծովափնայ գաւառներին: Այս երկու սարերը եւ մարած հրաբուխներ են, որոնց, ինչպէս Հայաստանի բոլոր հրաբուխների մասին, պատմութիւնը ոչինչ չէ յիշում: Ախլաթ գաւառի մէջն է Նաղիկայ լիճը մի կղզիակով, որի վրա քաղցր և ձկնեղ համր են:

Կիւղերի թիւ	88
Հայոց թիւ	9,864
Քրդեր	1,100
Քրդեր Համանցի ցեղի մի մաս	900

ՈՐԹԵՐԻ ՄԻ ՆՈՐ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆ

Այս վերնագրով մի յօդուած ինձ պատահել էր, դեռ անցեալ տարի, Ֆրանսիական Journal des cultivateurs օրապարտէսէն քայքայ մինչև այժմ այդ մասին, կարծեմ, որ մի տեղեկութիւն չը հաղորդեցաւ մեր պարբերական թերթերի մէջ։ Այժմ որ հասարակութեան ուղարկութիւնը լարված է Ռուսաստանումն էլ, խորհում, յայտնված ֆիլոսոֆայով, որը, ինչպէս երևում է գիւղատնտես պ. խօջայեվի «Кавказ» լրագրին յայտնած տեղեկութիւնից՝ արդէն Սուխումի մօտերքումն էլ է յայտնվել, աւելորդ չեմ համարում խաղողի այդ նոր հիւանդութեան համար համառօտ տեղեկութիւն հաղորդել «Մշակ» ընթերցողներին՝ յիշելով յօդուածից քաղելով։

Այդ հիւանդութիւնը պատճառովում է մի տեսակ սունկից, որը խիստ փնասակար է որթերի մի քանի յայտնի տեսակների համար, մանաւանդ եւրօպական տեսակներին։ midew american ոչ այլ ինչ է՝ եթէ ոչ մի սունկ։ Գառ peronospora viticola, միւնտինքից, որից է peronospora infestans, որը երկար տարիներով այնքան փնաս հասցրեց գետնախնձորին։ Նա միշտ ծնունդ է առնում որթի տերեւների ներքեւ երեսի վրայ, կամ իրեն արտայայտում է երբեմն կանոնաւոր, երբեմն անկանոն սպիտակ թափանցիկ բծերով։ 1880 թուականի յուլիսի 25-ից նա նկատվել է jacquez տեսակի որթերի տերեւների տակ, նա երեւացել է Ներաքի շրջակայքում ամերիկական տունկերի վրայ։ Նախընթաց դարում նորան նկատել էին Բուրգոնիայում, Ֆրանսիայի հարաւային սահմանում։ Ամերիկական տունկերի վրայ նա աւելի կանոնաւոր ձևով է լինում, իսկ Ֆրանսիականների վրայ շատ ցրված է լինում և տերեւի ներքեւ երեսը ծածկում է անկանոն գծադրութիւններով, թէ այսպէս և թէ այնպէս նորա

Վարժարան.....	2
Աշակերտ.....	81
Այս դասուը կարող է 500 տուն գաղթական ընդունել։	

13.
Ա Ր Ճ Է

Արձկէն (Առլէվազ) Արլայթու, Բուլանքայ, Մանազկերտի և Արձէլի մէջ կրնանք վառել Ժուտ արեւմտեան ափին, վրայ քաղաքի հանդէպ, վանից հեռի է ցամաքով 24 ժամ, իսկ ծովով 4 ժամ։ Գաւառապետին է Արձկէն, գաղաթաղած պրտ։ Դատու. Ժառանգանքով։ Առտու և վճիտ են սրա ջրերը. դրբը լեռնային է, միայն ժովափեային են հարթ։ Սրբան—Մասիք մշտաձին մեծ և գեղեցիկ լեռը կանգնած է Արձկէլի գլխին, տարածելով իր թեքը Արձկու, Բուլանքայ և Մանազկերտի սահմանների վրայ։ Արձկէլից բարձր Արձկանայ աջ թեքին տակ, սկաւառակաձև մի հովիտ կա։ Սրբէլն անուն, որ աւազան է մշտաբողի ջրերի։ Գառ մի անապատ արօտանդի է։ Օղբ բարեխառն է, ցորենին և խոտ առատ են։

Գիւղերի թիւ.....	98
Հայերի թիւ.....	15,615
Թիւրքեր.....	3675
Չէրէզ.....	780
Բիւրք ցեղերից հասնանցիք և հայտարանցիք թափառում են այս գաւառում։	

Վարժարաններ.....	4
Աշակերտներ.....	135
Վանք.....	3
Որոց մէջ նշանաւոր է Արանջեղադրձայ վանքը։ Այս գաւառը իր ծոցում կարող է 800 ընտանիք գաղթական ընդունել։	

14.
Ա Ր Ճ Է Զ

Արձէլ (Քաջբերունիք) հեռու է Վանէն ցածրից 18 ժամ, ծովից 2 ժամ։ Արձկէլի, Մա-

նեղործութիւնը միւնտին է. տերեւը ըսկսում է չորանալ, վայր է ընկնում և որթը իւր խաղողի ողկոյցներով փնում է համարեա՝ մերի, յառաջ քան թէ ողկոյցները կարող լինեն կատարելապէս հասունանալ։

Խոշորացուցական հետազոտութիւններով ապացուցվել է որ ամերիկական և Ֆրանսիական տունկերի midew-ը կատարելապէս միևնույն են։ Այդ տունկը մօտ ժամանակներում է Ֆրանսիա բերած, թէ վաղուց նա եղել է—այդ դեռ մի հարց է, որին յիշեալ օրագիրը զօրաբանում է պատասխանել։ Ինչ վերաբերում է նորա դէմ գործադրելի միջոցներին, ոչ կիրք, ոչ ծծումբը, ոչ մեկնեցողը չեն կարողանում հիւանդութիւնը վերջացնել, միայն պղնձային ծծմբաթթիւն աղն (sulfate de cuivre) է բուսական աշոյր արգասիք յոյց տուել։

Ա. Մ.
ՆԱՄԱԿ ԾՈՒՇՈՒՑ

Մայիսի 30

1879 թուականի վերջերից մեր հասարակութիւնը չորս անգամ դիմել է Գանձակի նահանգապետին խնդրելով թոյլ տալու Եւսէում հասարակական գրադարան բանալ, բայց այդ խնդրքը անկատար մնաց. վերջը տեղւոյ քաղաքային դպրոցի ուսուցիչ պ. Զեդգինիլիցն, ինքը անձամբ գնալով Գանձակ, նահանգապետից թոյլտուութիւն է ստացել մասնաւոր գրադարան բանալու, որը արդէն բացված է ու բաւական հարուստ է թէ հայերէն, թէ ռուսերէն ընտիր գրքերով և թէ գրատան ու մի քանի նուիրատու անձանց անունով ստացվող պարբերական հրատարակութիւններով։ Բայց չը նայելով որ մեր բաժանորդները մեծ ռաբախութեամբ էին վճարում տարեկան բաժանորդագրութեան տասն բլուրին, այնու ամենայնիւ սոցա մեծ մասը դեռ գրադարանի մուտքը չեն ճանաչում ու դրա վրայ նայում են միայն հրապարակի վերի ծայրիցը։

Գրադարանը ստանում է հետևեալ լրագրերը ու առատագրերը՝ «Մշակ», «Մեղու», «Մասիս», «Փորձ», «Արարատ», «Փարոս Հայաստանի», «Кавказ», «Голос», «Порядок», «Новости».

Նաղկերտի, Արաշկերտի և Բերկերտի մէջ կը նկնի։ Հարաւարեկեան մասերը ծովափեայ են։ Գաւառապետին է Ակապ, օղբ բարեխառն է, ջուրն առատ, հողն առաջին կարգի պողպէտ։ Զորեանը, ձին, ոչխար, արջաբն անուանի են։ Արձկէն և Արձկէն ուստի արտեր ցանկելու մի առանձին եղանակ ունին, որ շատ ապահով է երաշտութեան դէմ և արդիւնաբեր։ Արտը վաղից զկրի, ցանկելու ժամանակ, նրանք արօտով կրկին անգամ աղօսներով դժու են բոլոր արտը։ արօրի ետև տարեկանայ մի խոզովակ է հաստատված, որի միջնորդութեամբ ցորենի հատիկներ կը թափին կարգաւ միայն աղօսների մէջ։ Բնական է որ աղօսի երկու կողմի թմբերը միշտ կարող են խոնաւութիւն պահպանել և առատ սնունդ տալ ցանքին։ Այս տեսակ մշակված արտեր Տիր են կոչվում, որոնց ցորենի հատիկները պարարտ և խոշոր կը լինեն։ Վարդանաքի այդ եղանակը շատ հին պիտի լինի և բարեբաղդաբար հեղինակ տարածվում է շրջակայ գաւառների մէջ։

1878 թուականին, երբ բոլոր վասպուրականի արտերը երաշտով ոչնչացան, արձէլից և արձկէլից, չորհիւ իրանց ցանկելու եղանակին, առատ հունձ ունեցան։ 1879 և 1880 թ. կրկն սովը չորս կողմ կտորած էր անում, յիշեալ երկու գաւառները չարուսակ երեք տարի ցորեն ծախեցին և հարստացան։

Երկու գետ ունի գաւառը, Օրօրան և Արձէլ, Չիլանայ ձորում կան ծծմբային ջերմուկներ, ուր նշմարվում է հին մարմարեայ աւազանների նշխարներ։ Զիլանայ ձորում կան նաև պղնձի հանքեր։

Բոլոր գաւառին տիրում է յաղկաց լեռը (Ալա-տաղ) որ ոտից դուրս դարձաբոված է ծաղկալից պարարտ արօտով։ Այս լեռան մէջ կան շատ քարայրներ և հունքեանց բեկորներ, և մի լայնարձակ ճանապարհի հետքեր. ունի պղնձի հանքեր։ Առնիս գիւղի և Ականից մէջ, ճանապարհի եզերքին, ժայռերի վրայ, 5—6 կոտր բեկուադրեր

«Русский Курьер», «Фаланга», «Слово», «Отечественные Записки», «Вестник Европы», «Природа и Охота», «Живописное Обозрение», «Свѣтъ и Тѣни», «Юридическое Обозрение», «Le Temps» և երեք վրաց հրատարակութիւններ։

Միջալէ Տէր-Խաչատրեանց
ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԻՐ

Մեր բաժանորդներից մէկը, ընտելվելով պօլի-ցիական 6-րդ բաժնի մէջ Տաճոճենայա փողոցի վրայ, որ սուրբ Սարգիս եկեղեցուց էլ բաւական հեռու է, պատուիրել էր «Մշակին» ցրվողին իր համարները թողնել սուրբ Սարգիս եկեղեցու լուսարարի մօտ։ Կոնստանդնուպոլի նախանգամ երեւելի Մամրէ վարդապետը, որ նոյն եկեղեցու գաւթումն է ապրում այժմ, պատուիրել է լուսարարին ոչ թէ միայն չընդունել մեր բաժանորդի համարը, այլ և չը թողնել, որ «Մշակ» ներս տանեն եկեղեցու գաւթից։ Այդ կարգադրութիւնը արված է «Մշակին» մէջ Մամրէ վարդապետի մասին յօդուածների տպվելուց յետոյ։ Այս փաստից մեր ընթերցողները կարող են գաղափար կազմել Մամրէ վարդապետի մասին։

ԾՈՒՇՈՒՑ մեզ գրում են։ «Հոգեւոր դպրանոցի դրութիւնը շատ վատ է. երկպառակութիւնները կատարելապէս տիրած են կարապետ վարդապետի անհոգութեան, իսկ դուրս գաղափար չար նը։ Ս. Մանդուկեան, որ այս տարի հոգեւոր դպրանոցում մեծ աշխատութիւն ցուց տուեց, դժբաղդաբար թիֆլիս է գնում։ Գաղանոցի այժմեան անմիջապէս վիճակը յոյս չէ տալու մեզ որ այդ փորձառու տեսուչը մեզ մօտ մնայ։»

ԾՈՒՇՈՒՑ մեզ հաղորդում են։ «Նշանաւոր հարուստ կրտսերիկեանները մտադիր են ընկերութեամբ Եւսէում ժայռի ստորոտից մինչև Գանձակ երկաթուղու գիծ տանել։ Այդ լուրով քաղաքը ուրախացած է և անչափ մեծ յոյս ունի որ այդ գեղեցիկ դիտարկութիւնը իրագործվի։»

Կան փորած։ Այս քարերը անուանվում են օձաքարեր, որի վրայ զոնազան առասպելներ են պատմում։ Նոյն ժայռերի մի ծերայի մէջ, երկու քարի արանքում, 4—5 թիղ երկայնութեամբ և ձկնթի մասի հաստութեամբ ժողաների նման կենդանիներ կան իրար փաթաթված, սև և սպիտակ գոյնի օղակ օղակ պատում են կենդանու մարմինը։ Շատ աշխատեցայ այս կենդանիներից մէկը գտնել հանել, բայց անկարելի եղաւ։ Տեղացիք դրանց օձ են անուանում և պատմում են որ ամառ ձմեռ այդ քարի արանքից դուրս չեն գալիս։

Ականից հիւսիսային արևմտեան կողմը երկու վերստ հեռաւորութեամբ երևում է մի սպիտակ բլրակ—դա իրիշատի բերդի աւերակներն են։ Երկու շրջանային հիմունքը սպիտակ քարերից լինելով, բոլոր քաղաքի յատակագիծը յայտնի որոշ երևում է։ միջնափողոցներ, հրապարակներ, մինչև անգամ տան բակ և սենեակներ։ փողոցները ուղիղ և միջափ ձևած են. քաղաքը բաժանված է բազմաթիւ թաղերի։ Ամեն մի թաղում մի քանի մեծ փողոցներ կան, որոնք գուգահեռաբար թաղի մի ծայրից միւսն են անցնում. միջնափողոցները երկու կողմից ուղիղ խաչաձև կտրում են մեծ փողոցները. նրանց միմեանց մէջ ունեցած լայնութիւնը և երկայնութիւնը միապիսիս նոյնպէս և մեծ փողոցներին և թաղերին։ Թիւրքերի կառուած և հետաքրքրութիւնը չը դրդեւելու համար, եւ լրիգնապահին քաղաքի այդ աւերակները տեսնելու, կէս ժամ միայն լոյս ունենալով ինձ հետ, ուստի հագու կարողացայ մի թաղի փողոցների և միջոցների լայնութիւնը չափել և միւս թաղի հետ համեմատել։ Գլխաւոր փողոցները 25 ֆուտ լայնութիւն ունին, միջնափողոցները 16. միջնափողոցների միմեանց մէջ ունեցած գուգահեռական տարածութեան երկայնութիւնը 140 ֆուտ է, լայնութիւնը 115. Հայկական աւերակների մէջ առաջին անգամն էլ տեսնում եմ մի այսպիսի կառուած. որ յատակագիծ ունեցող բերդաքաղաք, որի

ԻԳԴԻՐԻՑ պ. Միլիտէ Զաքարեանց խնդրում է մեզ յայտնել որ նա ձեռնարկել է թարգմանել Լեզուվէ Ֆրանսիացի յայտնի հեղինակի գործը, «Մանկանց դաստիարակութեան վրայ» (О воспитаніи дѣтей) որ բաղկացած է երկու հատորներից. «Дѣтство» և «Юношество»։ Առաջի թարգմանութիւնը պարունակում էր վերջացրել է և շուտով կը սկսի երկրորդի թարգմանութիւնը։

Իգդիրից մեզ գրում են որ պատեղ կազմվել է թատրոնատերերի մի խումբ, որ մտադիր է ներկայացուցներ տալ բարեգործական նպատակով։

Այն ժամանակից երբ սկսել է տպվել «Մշակին» մէջ Գրիգոր Արծրունու ուսուցիչն Երօշիւրի մասին յայտարարութիւնը, ամեն կողմից սկսեցին պահանջել այդ բաժնիքը։ Այժմ խմբագրութեան մէջ շատ չէ մնացել այդ գրքիցից, բայց դարձեալ առնել ցանկացողներ շատ կան, որոնք դիմում են մեզ նամակով։ Այդ բաժնիքը «Экономическое положение армянъ въ Турціи» տպվել է Մոսկվայում հեղինակի հաշուով և այնտեղ ու Ս. Պետերբուրգում ուսանողների ձեռքով ծախվում էր յօդուած չբաւար ուսանողների։ Հետաքրքիր է իմանալ ու՞մ ձեռքումն է այդ բաժնիքը, արդեօք ամբողջութեամբ ծախվել է, թէ դարձեալ կայ։ Եթէ դա յօդուած ուսանողների էր ծախվում, ինչքան գոյացաւ գումար։ Եւ այժմ շատ ցանկացողներ կան գնելու այդ բաժնիքը, ուրեմն լաւ կը լինէր որ ուսանողները յայտնէին թէ որտեղ է ծախվում և ու՞մ կարելի է գնել առնելու համար։ Իսկ այն օրինակները, որոնք ծախվում էին «Մշակին» խմբագրութեան մէջ, դրանք յօդուած ուսանողների չէին ծախվում, այլ ուղարկվեցան մեզ փոխարէն այն 100 թուրք գումարի, որ մենք ծախեցինք բաժնիքի տպագրութեան համար։

«Кавказ» լրագրին գրում են որ Սուխումի շրջականներում արդէն յայտնվել է խաղողի որթերի թնձամի ֆիլոօքսերա սունկը։ Ուսուցիչական երկրագործ պ. խօջայեան արդէն հետազօտել է այդ տեղերը և ստուգում է ֆիլոօքսերայի երեսը։

Համար մեր պատմութեան մէջ ոչինչ չէ յիշատակված։	
Գիւղերի թիւ.....	152
Հայերի թիւ.....	26,897
Թիւրքեր.....	2904
Քիւրդեր (հայտարանցից աշխրաթի մի մաս).....	4000
Սրբա ընտելվում են Արատաղում։	
Վանք.....	4
Որոց մէջ նշանաւոր է Մեծօփայ վանքը	
Եկեղեցիներ.....	24
Վարժարան.....	3
Աշակերտներ.....	111
Կարող է 1500 տուն գաղթական ընդունել։	

Վերջ վասպուրական նահանգի։

ՅԱՆԵԼՈՒՄԸ

15.

Բ ու լ ա ն ը ի և Մ ա ն ա զ կ ե ռ տ
Վանայ ծովի արևմտեան գաւառաց ուղղութեամբ, այսինքն Արլայթու, Արձկէն և Արձիւն արևմտեան կողմը կը տարածվի վերին և ներքին Բուլանքայի և Մանազկերտի։ Այս երեք գաւառները միմեանցիկ բնույթ ունեն. հարաւէն նրանց սահմանում է Մշոյ գաղաքը, արևմուտքէն խոնու, հիւսիսէն Արաշկերտ։ Այս սահմանները լեռանց զօտիներով բաժանվում են։ Բուլանքայի և խոնու անջրպետող սարերը աղի լեռներ են, որոնցից առատութեամբ կարմիր և սպիտակ աղ կը հանվի, և աղի աղբիւրներ կը հոսեն։ Բուլանքայի հարաւէն արգասաբեր և լաւ մշակված հողեր չը կան, բայց առած Մանազկերտէն դէպի Արձէլ տարածված ընդարձակ դաշտը, որ քարքարաւոր է և ամայի։ Գառ Սիմանայ լաւային հեղեղառն է և անուանվում է Մանազկերտի քաղաք։
Համանցի քրդերը բռնած են Մանազկերտի լաւ

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԹԻՒՐԲԻՍ

Լրագիրները մէջ կարգում ենք հետևեալ տեղեկութիւնները: Հեռագիրը հաղորդեց, որ մահուան պատժի դատաւարութեամբ սուլթանի փեսաները բաժանված են իրանց կանանցից: Այդ փաստից կարելի է եզրակացնել, որ սուլթան Աբդուլ-Ազիզի սպանողները կամ մահուան պատժի կենթարկվեն, կամ կալանաւորված կը լինեն իրանց ամբողջ կեանքի ընթացքում և կամ թէ կաքսորվեն: Ուրիշ անգամները, երբ որ և է սուլթանի քոյրերի ամուսնները քաղաքներ են դատաւարութիւն, նրանց չեն բաժանել իրանց ամուսններից: Կրանից երեւում է, որ դատաւարութեան լիճակը շատ վատ է: Դժուար է քննել և Պոլսի դատարանի վճռի իրաւացիութիւնը: Կուցէ այդ վճռի հիմնված է կատարելագույն հաստատ և ակներև փաստերի վրա, բայց դատաւարական գործը արդարութեանը բաւական չունի իր տալու և յանգանքը պատժելու համար չէ սկսված: Միտհադ-փաշա և նրա համախոհները դատաւարների ենթարկեցան քաղաքական պատժաւորներով: Սուլթանի այժմեան խորհրդատուները և բարեկամները հաւատացրել են նրան, որ նա անկաւորող է հանդիսանում ֆաշի իր գահի վրա, քանի որ կենդանի են Միտհադ և Մահմադ-Կամադ փաշաների պէս մարդիկ և քանի որ նրանք միջոց ունեն պալատական դաւադրութիւնների կազմելու: Չափազանց փառասէր Միտհադ-փաշա և չափազանց ազաճ Մահմադ-Կամադ-փաշա փառաբաններ էին սուլթանի համար, որ չէր կամենում օգուտ քաղել նրանց ծառայութիւններից: Նրանք հեշտութեամբ կարող էին մի նոր յեղափոխութիւն անել և Աբդուլ-Համիդի համար նորի փառանք պատրաստել, որին ենթարկվեցաւ հանգուցեալ սուլթանը: Կատաւարութեամբ իր կորուստը վաղուց վճռված էր

մասերը և սուղանում են խաչներ և ընտիր նուրբեր:

Հաւթիւնք անուն գեղեցիկ և երկարաձիգ հովիտը ծանաղաբար չի փայլում և զբաւում, որի մէջ ծայրը Ալաշկերտի սահմանից է սկսվում: Արան կարելի է անուանել երկարաւոր հովիտ: Սրա միջին ծանաղաբայ լայնածաւալ հատում է երկարաւոր իր ծոցն ընդունելով Մանաղկերտի և Խրեոսայի գետերը:

Երկարաւոր չիլում է երկու բուսանքները մէջ, ճեղքելով Չալիթիւրայի նեղ ծորերը և կիրճերը իջնում է Մայր ընդարձակ դաշտը: Հաւթիւնք հովիտում Հասանայի քրդեր են ապրում մօտ 250 վրան: Կրա մի փոքրիկ մասն է միայն հայոց ձեռքում: Մանաղկերտը կարող է մօտ 3000 ընտանիք գաղթական ընդունել:

Մօտ տարիներում չէր ձգնեցիկ և կարսի գաղթականներից 200 տուն բնակեցրին Մանաղկերտում և ներքին Բուլանքիւնում, որոնց հետ քրդերը խիստ թշնամութեամբ են վարվում:

Ալաշկերտ քրդերից հասանելի կը բնակվեն Մանաղկերտում և ներքին Բուլանքիւնում, իսկ ձիւրանցիք և սէյրանցիք մի մաս, մօտ 150 վրան, կը բնակեն ներքին Բուլանքիւնում:

Երկու Բուլանքիւնի դատող Բէշան Լեւը անուանում է և հինաւորը բերդերի և ինտելեկտի աւերակներ ունի իր վրա: Բէշանի ստորադաս զէպի կոմի գիւղը մի լճակ կայ, խաչուայ ծով անուն, ջուրը քաղցր է և մանր ձկնեղծ լիք: Կորանից վտակ դուրս գալով պտտացնում ջրաղացներ և սուղում է գիւղեր:

Այս երեք գաւառների գոտի հայաբնակ և քրդերի հետ խառն գիւղերի թիւն է . . . 159

Հայերի թիւ 34,864

Վարժարաններ 14

Աշակերտներ 2616

Կոմայ վանքի մէջ Միացեալ ընկերութիւնը, 20 աշակերտի համար, մի գիւղերի ռաւանիւրան է բացել:

և նրանց պատիժը անպատժաւ կը կատարվի: Թիւրքիայի քաղաքական կեանքից այդ գործիչները անպատժաւ կանհետանան և այդ կորուստը հազիւ թէ մէկը ամոսայ:

Աբդուլ-Ազիզի դատաւարական գործի վրա պէտք է այս իսկ տեսակետից նայել: Անձնականապէս դատաւարութեամբ այդ պալատականները ոչ ոքի համար հետաքրքիր չեն: Նրանք չափազանց մեծ չարիք պատճառեցին Թիւրքիային, որ նշանաւոր ազգեցութիւն ունեցաւ եւրօպայի քաղաքական կեանքի վրա 1876 թուից մինչև այդ մարդկերանց անկումը: Նրանց կորուստը մասամբ կը հանգստացնէ եւրօպային: Վերջնականապէս հանգստացած սուլթանը միջոց կունենայ զբաղվել իր երկրի գործերով և գուցէ իր խորհրդատուներից այնպիսի մի մարդ կընտրէ, որ ընդունակ կը լինի կարգի բերել Թիւրքիայի խառնված գործերը: Երբ Արեւելքը հանգիստ է լինում, եւրօպական պետութիւններն էլ կարողանում են իրանց միջազգային գործերին աւելի ժամանակ նուիրել և պաշտպանել իրանց շահերը:

ՅԻՍՆՍԻՍ

Պատերազմական միջնադարը կարգադրեց, որ ամբողջների շինութիւններն ոչ ոք ներկայ չը գտնվի բացի աշխատողներից և ֆրանսիական օժիցիներին: Ստարները պէտք է առանձին թողնուի իր ստանալ պատերազմական միջնադարը: «Հաւթիւնքի ընկերութիւնը» ապել է հետևեալ հաւթիւնքի ընկերութիւնը: Տրիպոլի թիւրքացի իւր նախահաւատ Նազիֆ-փաշա, հասնելով Տրիպոլի հէնց առաջին օրից զբաղվեցաւ պատերազմական յոյժերի կազմակերպութեամբ: Նա զօրաւոր է կատարում մինչև անգամ ֆրանսիական հիւպատոսի տան առաջ: Պատերազմական այդ պատրաստութիւնները առիթ են տալիս ճանաչել մէջ բնակվող ցեղերին ապստամբական ցոյցեր անել: Տրիպոլի ուղարկված թիւրքացի զօրքերը բազմաթիւ չեն, բայց արաբները լուր են տարածում, որ նրանց թիւը հասնում է 50,000: Այդ զօրքերը, ինչպէս հաւատացնում են

Բնակիչները լաւ հայեր են, ազգային պայծառ պապազայն համար հոգի և կեանք նուիրող և նրա յուսումն ապրող:

16.

Խ Ն Ո Ւ Ս

Խոնուր վարդօյի, Բառնուր, Մանաղկերտի, վերին և ներքին Բուլանքիւնների մէջ է, զիբքը լեռնային է, ունի բարդ գաղտնի մասեր: Չորսն առաւ, օդը զով է անմիան, հոյն արգաւանդ, Գաւառագլուխն է Խոնուրը բերդը: Խոնուրը առաջին մարդուց, Աղանայ և Եւայի հայրենիք, բնակարանն է կարծւում, որին սուրբ Կիբքը զբաղում է անուանում: Խոնուրը գետը Բիւրակ-նեան լեռներից բխում է և սուղելով շատ գիւղեր Գաւառքի միջին առաջին կանցիկ Բուլանքիւն և կը խառնվի Երկարային: Երանի աղբիւրներն են այս գաւառի Բիւրակ-նեան լեռներից իջնում են, որ մի մեծ վտակ դառնալով, Թաթու գիւղի մօտէն իջնում է գէպի Գիւլիւ և Մէճիւրի գիւղեր և անցնում է Բառնուր:

Այս գաւառի բոլոր լեռները նշանաւոր են իրանց առաւ և բարեհամ ջրերով և արտաբերով: Բիւրակ-նեան լեռները իրաւունքով կարելի է Հայաստանի բոլոր լեռանց թագուհին անուանել: Բիւրակը խաչուայ, անդուր, անդուր և նոյնիսկ արաւում են նրանց վրա: Բիւրակը թափանցիկ վտակներ, աղբիւրներ խորհում են նրանց կողերի վրա: Անթիւ գոյնզգոյն սիրուն թուշուների տեսակները ճլրլում են նրանց չորքը: Բիւրակը և զեռ անծանօթ ծաղկների հազարաւոր տեսակներ զարդարում են նրանց գլուխը, կուրծքը, թեւերը և անմահական հոտով անուշաքանդ են նրանց պայծառ միջնադարը: Եւ այս ամենը յիշենում են հինաւորը կղեր: Հնագոյն յիշուներ զերդեղներ սփռված են բոլոր այս գաւառում: Բնակիչները առողջ, յաղթանդամ և գեղեցիկ են:

Հայաբնակ գիւղերի թիւն է 132

արաբները, պէտք է զբաւեն ոչ թէ միայն ճանաչել, այլ և Ալժիրիան և այդ տեղերից պէտք է արտաբեր ֆրանսիացիներին: Նազիֆ-փաշա բացի այդ կազմակերպում է անկանոն օգնական զօրքեր օաղխներ և անպատաների մէջ բնակվող ցեղերից: Նորերում նա մեծ զօրաւոր կատարեց, որին մասնակցեցին թիւրքացի կանոնաւոր և արաբներից կազմված օգնական զօրքերը: Տրիպոլի մէջ կատարվող պատրաստութիւններից երեւում է, որ Թիւրքիան մտադիր է չը թողնուի Ֆրանսիայի գերիշխանութիւնը ճանաչել վրա: Թիւրքացի նահապետը հրաժարվեցաւ հետեւի ճանաչել և Ֆրանսիայի մէջ կապված գաղտնագրութեան պայմաններին տունիցներից հետ յարաբերութիւններ ունենալու ժամանակ: Այդ պատճառով ֆրանսիական հիւպատոսի դրութիւնը Տրիպոլի մէջ չափազանց դժուար է:

Հանրապետականները մինչև այժմ ուշադրութիւն չէին դարձնում Ալժիրիայի կառավարիչ Ալբեր Գրեվիի դէմ յարուցված զանգաւանների վրա: Ալբեր Գրեվի նշանակվեցաւ Ալժիրիայի կառավարիչ հանրապետականների ցոյցերից և համաձայն, իսկ նրա հակառակորդները յետագիւղականներն էին: Այդքանը հանրապետականների համար բաւական էր և նրանք ուշադրութիւն չէին դարձնում Ալժիրիայի կառավարիչ թեւի գործունէութեան վրա:

Այժմ հանգամանքները փոխվել են: Հանրապետական կուսակցութիւնը բաժանվել է երկու մասերի, որոնք մի քանի հարցերի ընտելութեան ժամանակ միմեանց ընդդիմադրում են և որոնցից մէկը Գաւառագլուխի կուսակցությունը է կազմված, իսկ միւսը Գրեվի բարեկամներից: Գաւառագլուխի կուսակցությունը ամեն մի գէպից օգուտ են քաղում իրանց հակառակորդներին մի անբաւականութիւն պատճառելու համար: Ալժիրիայի մէջ պատահած անցքերը մեծ առաւելութիւն են տալիս Գաւառագլուխի կողմնակիցներին և նրանք մի արշաւանք են սկսել ձիւր Գրեվիի միջնադարի թեւի գէպի:

Եթէ Ալժիրիայի մէջ պատահող վերադրմանը քանի և անկարգութիւնները շուտով չը վերջանան, պատգամաւորների ապագայ ընտրութիւնների ժամանակ Գաւառագլուխը իր ձեռքին մի նշանաւոր գէպ կունենայ, որի օգնութեամբ նա կարող է յաղթել իր հակառակորդներին:

Հայերի թիւ	19,827	
Քրդեր	7056	
Զիւրանցի ալաշկերտ, հասանցից և ջիւրանցիք մի մասը: Այստեղ բնակվում են 80 տուն չէրքէզներ և Զապ կամ Տիւրի կոչված աղաւաթիւ և խեղճ քրդերը: Խոնուր կարող է իր մէջ 1000 ընտանիք գաղթական ընդունել:		
Վարժարաններ	8	
Աշակերտներ	296	
Վ Կ Ր Ջ		
Ալաշկերտ կամ թափառական քրդերի ցեղերը երկու մասի են բաժանվում: մի մասը որ Մուսուլայ և Տիւրանակերտի կողմերից գալիս են գաւառի և սփռվում են Մուլայ, Դատախոս և Երօսուղայի կողմերը: միւս մասը Պարսկաստանի սահմանագլուխը կը տարածվեն Արաղայի գաւառի վրա Աղբիւրի և Խոնուր կողմերը:		
Տիւրանակերտի կողմից եկող Ալաշկերտի անունները և թիւը:		
Յիւզանք	վրան	անձինք
1 Եւթանցիք	200	1200
2 Մահմադանցիք	150	900
3 Սէյրանցիք	60	300
4 Զեռանցիք	100	600
5 Արաղայիք	250	1500
6 Զապանցիք	200	800
7 Գէպանցիք	100	600
8 Միւրանցիք	150	900
9 Մալուշանցիք	250	1500
10 Կճանցիք	350	2100
11 Խէրլանցիք	140	840
12 Տահանցիք	250	1500
13 Բալանցիք	50	300
14 Բալանցիք	150	900
15 Կալանցիք	200	1200
16 Միւրանցիք	300	1800
17 Սէլանցիք	200	1200
18 Տիւրանցիք	300	1800

ԻՏԱԼԻԱ

—

Պահպանողական կուսակցութեան մի քանի նշանաւոր անդամներ, ի նկատի առնելով Կեպրեսի միջնադարի թեւի անհման անհրաժեշտութիւնը, զիմեցին Սելաւան 130 պատգամաւորներից ստորագրված մի հեռագրով, որի մէջ նրանք զանգաւաւում են այժմեան միջնադարի երկու փարմանքից Ֆրանսիայի վերաբերութեամբ: Պալեմոն մէջ ժողովրդական ցոյցերի ժամանակ ամբողջ կանչում էր «Թող կորչեն անընդունակ միջնադարի թեւի, թող կորչեն Գաւառագլուխի կողմնակիցները»: «Riforma» Լրագիրը խիստ քննութեան ենթարկեց արաւելի գործերի միջնադարի պարզամտութիւնը մեկնութիւնը Մարսելի մէջ պատահած անցքերի վերաբերութեամբ: Լրագիրը պնդում է, որ Մարսելի մէջ սպանված իտալացիների թիւը կառավարութիւնը փոքրացնում է Ֆրանսիային հաճոյանաւոր համար: Վենետիկի և մի քանի այլ փոքրիկ քաղաքների մէջ Ֆրանսիայի դէմ ցոյցեր են պատահել, որոնք խաղաղութեամբ են վերջացել: Վենետիկի մէջ շատ մարդիկ են կալանաւորված:

Իտալական պարլամենտը ընդունեց ընտրողական օրինակի մէջ 202 ձայների մեծամասնութեամբ 116-ի դէմ: Իտալական դեպուտատ Փարիզի մէջ հրաժարվեցաւ իր պաշտօնից: Նա կը վերադառնայ Իտալիա, որտեղ կը հրատարակէ իր զրազրութիւնը իտալական կառավարութեան հետ:

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆՑ

ԱՄԺԻՐ, 30 յունիսի: Բու-Ամմ 1000 արաններից բաղկացած զօրաբաժնով յունիսի 26-ին երեք անգամ անաջող կերպով յարձակվեցաւ կրէյսերի վրա (նաւ), որ պաշտպանվում էր երեք խումբ հրացանաձիգներով: Ապստամբները փախան կորցնելով 250 մարդ:

Խմբագիր—Հրատարակող ԳԻՒԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

19 Կարիանցիք	150	900
20 Մամադանցիք	100	600
21 Ստրկանցիք	150	900
22 Շիւանցիք	150	900
23 Զարկցիք	500	3000
24 Ուշանցիք և զիւր	160	960
25 Հաւթիւնք—կիւրիք	400	2400
Գումար	5010	28,440
Պարսկաստանի սահմանագլուխի կողմեր		
26 Մուկուրցիք	300	2100
27 Թակուրցիք	150	950
28 Շամանցիք	400	2800
29 Մլանցիք	100	700
30 Շիւակ	150	1800
31 Հէյտարանցիք	200	1400
32 Լիւցիք	100	500
33 Կիւրիք	350	2500

Գումար	1750	12,750
Վասպուրական նահանգի հետ առնելով Բուլանքիւններ, Մանաղկերտ և Խոնուր գաւառները հայերի ամբողջ թիւն է		
Վասպուրական նահանգի հայոց թիւը առանձին		249,361
Օտար ցեղեր բոլորը միասին		150,729
Ասորիներ		86,368
Քրդեր		51,828
Թիւրքեր		13,964
Եզդիք		7760
Հրէաներ		809
Մահմադական կրօնին պատկանեալ ազգեր		65,792
Գրիտոնեաներ		100,469
Բոլոր ազգերը միասին		474,730

(Կը շարունակվի)

Типографія Главнаго Управленія Намѣстника Кавказскаго.